

DIE TODTENGEBRAUCHE DER

ASITISCHEN VÖLKER

VON RICHARD FRITSCHKE.

(Oestreichische Monatsaschrift für den Orient.)

1887. December, № 12. pag. 186 ff.

ԱՍԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԵՌԵԼՆԵՐԻ ԹԱՂՄԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Արաբիայից, Հիւսիսային Աֆրիկայից, Փոքր-Ասիայից, Եփրատա-
կան երկրներից սկսած մինչև Հնդկաստան այն ժողովրդների համար,
որոնք պաշտում են Մուհամեդի հաւատը, մեռածի մարմինը ան-
մաքուր, ապականուած է, որը (մարմինը) տաք կլիմայի ազդե-
ցութեան տակ շատ արագ քայքայուել սկսելով, մարդկանց մէջ
զգուանք է յարուցանում, ուստի պէտք է շուտով տանից հե-
ռացնուի: Առաւօտը մեռնողին կէսօրին արդէն թաղում են, մեռ-
նում է մոսլեմը (մահմեդականը) երեկոյեան, նրան թաղում են
արդէն հետակայ առաւօտը, մահմեդականի համար արդէն զար-
հուրելի է, եթէ նա ստիպուած է մեռածի մարմինը մի ամբողջ
գիշեր իր տանը պահել: Երբ մոսլեմը նկատում է վերջի բոպէի
մօտենալը, կատարելով իր կրօնի պատուէրը, լուացւում է իր որ-
դու օգնութեամբ վերջին անգամ: Նրա կիներն ու որդիքը լաց ու
կոծով շրջապատած նրա մահիճը՝ ասում են հաւատալիքը. «Մեծ է
Ալլահը և Մուհամեդը նրա մարգարէն է: Նա է միակ ամենազօ-
րեղը, նա յարութիւն կրտայ մեզ վերջին դատաստանին»: Հէնց
որ հիւանդը հոգին աւանդում է, այն ժամանակ կանայք բարձր
ձիչեր արձակելով սկսում են վայնասուն (walwala), որը լեզուի

արագ և դողդոջիւն շարժմունքով երգուելով շատ հեռուից լսելի է: Մահուան լուրը արագութեամբ տարածուում է մեռածի քաղաքամասում, ամեն կողմից ներս են թափուում հարեանների, բարերեկամներ և այրու սգին ձայնակցում: «Ո՛հ իմ տէր, ո՛հ իմ ուղտ, ո՛հ իմ առիւծ, ո՛հ այս տանը ուղտ, ո՛վ իմ փառք, ո՛վ իմ օգնութիւն, է՛վ իմ հայր»: Եթէ լալկան կանայք են հրաւիրում, որ մի քանիսները պախարակելի համարելով չեն հետեւում սուրբութեան, նրանք գովեստներ են թափում մեռածի գլխին, գովում են նրա սիրուն հասակը, տուրքանը, մեծահոգութիւնը, բարեպաշտութիւնը և այլն: Ոմանց ասելով, մարգարէն արգելել է մեռածի վրայ սգալ, որովհետեւ մեռնողը տեղափոխուում է արքայութիւն: Կար ժամանակ, երբ մէկը մեռնում էր ոչնչացնում էին նրա կահկարասիքը, կոտորում տան ամանները, երեսները սեւացնում, միրուքը կտրում, տան պատերը սեւացնում և այդ սուրբութիւնը մինչև հիմա էլ մնացած է Կայիրոյի հարուստ տներում:

Շուտով երևում է մեռելի լողացնողը, նրա հետ միասին Ֆիկին (Fiki) մեծեթի ուսուցիչը, որ հոգևորականի բնաւորութիւն ունի և մինչդեռ վերջինս միաձայն և արագ կուրանից մի քանի աղօթքներ է ասում առաջինը լուանում է լէշը: Յետոյ մեռելին հագցնում են պատան, ծածկում են նրան կաշմիրի կարմիր շալով և գնում են հասարակ, բաց դագաղում, կամ ուղղակի դրնում են նաշի վրայ: Թաղման հանդէսի սկիզբը բաց է անում երգեցիկ երեսաների խումբը:

Առաջի երեխան ձեռքին բռնած ունի կանաչ կաղմում փաթաթուած, արմաւենի գրքակալի վրայ դրած կուրանը: Բոլորը միասին երգում են: Օրհնեալ է մարգարէն և նա ով օրհնելով նրան՝ խոնարհում է դէսլի նա: Դագաղի առաջնից գնում են չորս երիտասարդներ, ազդրները կանաչ մահուկով ծածկած, մի ձեռում բուռվառ բռնած, միւսով փոքրիկ շշերից վարդի ջուր են սրսկում մեռելի գնացքին մասնակցողների վրայ: Մեռածի թաղման հանդիսին մասնակցելը պատուարեք է համարում: Այլահը այգալիսինի մեղքերին թողութիւն է տալիս և ար-

քայուլթեան դռները նրա առաջին բաց անում և այդ է պատ-
ճառը, որ սգաւորների թիւը բազմիշտ խիստ մեծանում է: Եգիպ-
տոսում, ուր ապրում են աշխարհիս ամենաշատ կոյրերը, ուր
հարիւրից մէկը կոյր է, մեռելի առաջնից սուրորաբար քայլում է
կոյրերի մի ամբողջ խումբ: Այսպէս կարելի է տեսնել Կայի-
րոյի Մուսկիում (Muski), խալիֆների քաղաքի գլխաւոր շարժ-
ման կենդրոնում, բազմաթիւ կոյրեր, որ օրն ի բուն առաջնոր-
դում են մեռնողների դագաղը: Նրանք շարունակ երգում են հա-
ւատոյ սկզբունքը, շարունակ մաղթում են մարգարէի օրհնու-
թիւնը: Դագաղի հետեւից, որը եթէ կնոջ է պատկանում գլխի
մասում ցըցուած է լինում գոյնզդոյն մահուղներով զարդարուած
մի ձողի, քայլում են սգաւորները: Կանայք ներկում են այժմէլ
իրանց ճակատն ու կուրծքը հողի գոյնով, մի սուրբութիւն, որ
գոյութիւն ունէր դեռ հին եգիպտացիների ժամանակ: Ժամանակ
առ ժամանակ արձակում են ականջ իւրացնող սուգը: Միայն մարգ-
կանց մարմիններն են կարճ տեղող արարողութեան համար մե-
ծիթ տանում: Իմա՞քը ասում է աղօթքը, որից յետոյ մի տեսակ
մահուան դադաստան է տեղի ունենում: Սուրբար հոգեւորա-
կանը սգաւորներին հարցնում է. «կարո՞ղ էք հաստատել, որ հան-
գուցեալը մարգարէի հաւատարիմ ծառայ է եղել», իսկ սրանք
պատասխանում են. «այո՛ նա առաքինիներից մէկն էր»: Յետոյ դա-
գաղը վերցրած արագ քայլերով գնում են դէպի հանգստարան:
Կոստանդնուպօլսում բեռնակիր համալները դագաղը ուսներին
այնպէս են վազում, որ սգաւորները դժուարութեամբ են նրանց
հետևում: Հանգստարանները սուրբար գտնւում են բնութեամբ
գեղեցիկ վայրերում: Երկնային բաղդաւորութեան մասնակից լի-
նելու ամենաապահով միջոցն է համարւում մարգարէի գերեզ-
մանի մօտ թաղուել: Այդպէս Պարսկաստանում մինչև այսօր
ահագին քարաւաններ, գարշահոտութիւն և ժանդախտ տարա-
ծելով, մեռածներին տանում են Մուհամեդի փեսայ Ալիի գերեզ-
մանի՝ Մեշեդի մօտ թաղելու, որ շիաների Մեկկան է, կամ
թէ Քերբելահա Ալիի որդի Հուսէյնի գերեզմանը, որպէս զի
այնտեղ, նայած ու ինչքան վճարել կարող է, յիշեալների

շիրիմներից մօտ կամ հեռու թաղուելու տեղ ստանան:

Հանգստարանում կարգում է կամ իմամը, կամ ոտոր հոգե-
ւորականներից մէկը շուտ շուտ կորանի որոշ աղօթքները, յե-
տոյ մեռածին գնում են առանց դադարի միայն պարանոյ վաթ-
թած, երեք կամ չորս ոտնաչափ խորութիւն ունեցող գերեզմա-
նի մէջ աջ կողմի վրայ, երեսը դէպի Մեկկայ, իսկ յետոյ սգա-
ւորները ամեն կողմից մեռելին շուտով հողով են անում: Որով-
հետեւ գերեզմանը վառ են պահպանում և հանգստարանը եր-
բէք պարսպով պաշտպանուած է, յաճախ է պատահում, որ
խմբերով ներկայ եղող շները լէշը գուրս են քաշում հողից և
զարհուրելի կերպով մաքրազարգում: Հարուստների գերեզմանը
աւելի ապահով է, քանի որ նրանք աղիւսեայ սրտով ամրացն-
ւում են և հողով լաւ ծածկում: Իմամը վերջը մեռելին դարձած
կանչում է. «Այժմ՝ կրգան մահուան հրեշտակները, թող հոգիդ
նրանց պատասխանատու լինի, արդեօք հաւատարիմ է եղել մար-
գարէին», և ապա սգաւորները ցրւում են: Մահու երկու հրեշ-
տակ կան, Մունկար (Munkar) և Նեկիր (Nekir): Սրանք ժո-
ղովրդի հաւատով սարսափելի երեսներ երկար ատամներ ու-
նին և ձեռներին բռնած ունին երկաթեայ գաւազաններ: Արդար-
ների հոգուն թոյլ է տուած երկինք բարձրանալ և դիտել ար-
քայութիւնը, ապա վերադառնում է նա (հոգին) գերեզման,
թաղնւած է կրճքի պատանի տակ: Երբ մահուան հրեշտակը
երևան է գալիս հոգին մոնում է մեռածի քիթը և նրան կեն-
դանութիւն տալիս և ուղիղ նստած լսում է իր վճիռը: Բա-
րիներին սպասում է վերջի դադաստանի օրը յարութիւն, իսկ
չարերին երկաթեայ գաւազաններով գանակոծում են, գլորում են
մինչև եօթներորդ երկիրը և նորից վերև շարտում և եօթ ան-
գամ պէտք է կրեն այս պատիժը: Արաբական գերեզմանը, ինչ-
պէս սովորութիւն էր Յոյների և Հռովմայեցիների մէջ, վերի ծայ-
րում անցք ունի, որպէս զի մեռածի բարեկամների աղօթքները
և բարեմախթութիւնքը մեռածին հասնի¹⁾: Թէ ժառանգը միջոց

1) Ծանօթ թարգմանչի: Յայտնի է այս սովորութիւնը, որ

ունի, հանգուցեալի շիրիմի վերայ քարէ արձան է կանգնեցնում, որի վերի ծայրին քարեայ սիւն է ցցած: Նրանց ծայրերը մարդկանց համար դուրբանի կամ ֆէսի կերպարանք ունին, կանանց համար ծաղկի, իսկ վերայի արձանագրութիւնը յիշատակում է մեռածի անունը, որ դասակարգին պատկանելը, նրա առաքինութիւնները: Արձանաքարի չորս ծայրերին փոսեր են փորուած, որպէսզի անձրեւից և ցողից այնտեղ ջուր հաւաքուի, թռչունները գան խմեն և գերեզմանի վրայ երգեն: Սակայն ոչ մի մարդ չի կարող մեռելաքարի վերայ նստել, որովհետեւ մարգարէի աւանդութիւնը ասում է, եթէ ձեզնից մէկը վառուած ածուխի վերայ նստի, այն ժամանակ նրա ամբողջ մարմինը կայրուի, բայց սա այնքան վնասակար չէ, ինչքան եթէ նա ուղղափառի գերեզմանի վերայ նստի:

գոյութիւն ունի նաեւ մեր կողմերի թուրք մահմեդականների մէջ, առիթ է տուել հայ գիւղացուին նրան զանազան՝ կրօնական թրշնամութիւնից բղխած անպատեհ մեկնութիւններ տալ: Այդ բացատրութիւններից մէկը, ինչքան յիշում եմ, հետեւեալ բովանդակութիւնն ունէր: Թրքի հոգին, անմաքուր լինելով, անարժան է երկնքին: Նա մնում է երկրիս վրայ և շան լակոտի կերպարանք է ստանում: Վերոյիշեալ անցքը թողուած է նրա համար, որ մեռածի աղգականները մեռելի շուն դարձած հոգուն կերակուր մատակարարեն: Քչերին չի պատահել մահմեդականի գերեզմանատունով անցնելիս այդ տեսակ սիրուն շան լակոտների հանդիպել, բայց երբ քսակի մէջ առած տուն տանելիս են եղել, շունը մարդու լեզուով տանողին աղաչել է, որ իրան բաց թողնի: Եթէ այդ տեսակ աւանդութիւնները ժողովրդի բերանից անլրէպ գրի առնուին, կարող են, հաւանականօրէն ուրիշ հին և թէ նոր ազգերի նոյնատեսակ առասպելների հետ համեմատուելով, նրա ծագման մասին մեզ մի որոշ եզրակացութեան հասցնել: Ո՛վ գիտէ, գուցէ այդ սնտոխապաշտութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մնացորդ այն մեծ, շատ աղգերի մէջ տարածուած հաւատի, ըստ որում մեղաւոր մարդկանց հոգիքը մինչև իրանց հանգրտութեան կէտին հասնելը, պէտք է շատ կենդանիների մարմնի միջից անցնէին: Այդ հաւատը գտնում ենք Հնդկիների մօտ, Եգիպտացիների մօտ, որոնցից նոյնը ըստ աւանդութեան Պիլ-թագորոսը փոխ առնելով իր դաւանութեան հիմունքներից մէկը շինեց):

Բարձր, սաղարթախիտ, անշարժ սալքի ծառեր (սէլֆի), որոնք կոստանդնուպոլսի Սկիւտարի, արևելքի ամենամեծ հանգստարանում մի հրաշալի, ընդարձակ անտառ են կազմում ստուեր են գցում հանգուցեալների շիրիմների վրայ: Քառասունըից յետոյ սովորաբար հինգշաբաթ և աւելի յաճախ ուրբաթ օրերը գերեզմանատուն են գալիս: Պէտք է ասած, որ հանգստարանը մուսլէմի համար խորշելու, զարհուրելու տեղ չէ, ընդհակառակը նրանք բերում են այնտեղ հալւայ, քաղցրաւենիք, տոլմայ և նստած սալքի ծառերի տակ անուշ են անում: Մանաւանդ Պարսկաստանում հանգստարան գնալը հաւասար է մեր Landpartie (քաղաքից դուրս դաշտ գնալուն), ուր մեռելի ազգականները շրջապատուած իրենց երեխաներով անց են կացնում ամբողջ օրուայ կէսը: Սովորաբար բարեւում են իրար. «assalâmo alaikam» (խաղաղութիւն ընդ ձեզ) սիրուն բարեւով և հաւատացած են, որ մեռելները պատասխանում են նրանց բարեւին: Իրսու այդ վայրերը, եթէ շները և բորենիները լէշեր դուրս չհանէին, ներկայացնում են իսկական հանգստարան, ուր հանգստանում են մեռելները և ոչ թէ ինչպէս մենք ենք անում, մի քանի տարիներից յետ հողից դուրս են հանում:

Մի ուրիշ հիանալի սովորութիւնն էլ նա է՝ թաղումներին չմոռանալ աղքատներին, մինչև անգամ ամենաաղքատն էլ բաժանում է նրանց մի քանի հատ թուղ կամ արմու: Իսկ հարուստների թաղումին ժողովուրդը մեծ ընծաներ է ստանում: Երբ վաթսուն թուականներին Եգիպտոսի Եքս-խեզիվ Իսմայիլ փաշայի սիրելի աղջիկը թաղեցին, այն ժամանակ մեծափայլ թաղման հանդիսին, որի առաջից տանում էին մարգարէի կանաչ դրօշը, երբ դերվիշները, համբարները և աշակերտները, երբ կայիրոյի պաշտօնեաները և քաղաքացիք մասնակցում էին հանդիսին, երբ հարիւր լալկան կանայք անգագար կրկնում էին աններդաշնակ վայնասուն և երբ մի խումբ երախտներ ձեռներին անուշահոտ բուրմունքներ և վարդաջուր անդադար բաժանում և սրսկում էին ժողովրդին, հետեւում էին նաև բազմաթիւ ուղտեր հացով և արմաւով բեռնած, որ շարունակ սփռում

էին ամբօխի մէջ, մինչդեռ յիսուն ջրկիրներ վարդաջուր և պողի շերբեթ էին մատակարարում, և յիսուն գոմէշ ու երկու հարիւր ոչխարներ մորթեցին ամբօխի համար:

Միջին Ասիայում, գլխաւորապէս այնտեղ՝ ուր տիրապետում է բուդայականութիւնը, թաղման սովորութիւնները այլ կերպարանք ունին: Հնդկաստանում այրում են մարմինները և յայտնի է, որ մինչև Անգղիացւոց երկրին տիրապետելը և յետոյ դեռ երկար ժամանակ ստիպուած էր մեռածի կինը իրան կրակը նետել և մարդու հետ այրուել: Նրանց համար ամենամեծ անպատուութիւն էր մարդու մահից յետ ապրել, այդտեսակ կանայք ժողովրդից նախատուած և անպատուած էին: Բայց շնորհիւ անգղիական մարդասէր քաղաքականութեան, որ խստութեամբ արգելեց այդ բարբարոսական սովորութիւնը, նա այլ ևս գոյութիւն չունի: Կալկաթայում, Անգլիոյ — հնդկական իշխանութեան մայրաքաղաքում գտնուում է քաղաքից վերի մասում ընկած Մանգատում՝ Գանգէսի վերի ափին, մեռելների այրման տեղը և իւրաքանչիւր ոք կարող է այրելու հանգիսին ներկայ գտնուել: Մեռածին խարոյկի վրայ են բարձրացնում, բարեկամները կաթեցնում են նրա աչքերին մի քանի կաթիլ ջուր, յետոյ դարսում են նրա վրան փայտ, վառում են խարոյկը, որ շուտով այրւելով մեռածից ոչինչ չի թողնում, բայց միայն մոխիր և մի քանի կտոր այրուած ոսկոռներ: Բոմբէյում նկատելի է երեկոյեան այրուող խարոյկի հեռուն տարածուող լուսոյ ճառագայթները: Առաջներում հազարաւոր, մինչև անգամ միլիոնաւոր լէշեր, որ սիրում է կործանիչ ժանտախտը, Գանգէսի ալիքներին էին նուիրում: Անգղիական իշխանութիւնը ստիպուած էր առողջապահական տեսակէտից այդ սովորութիւնն էլ արգելել: սակայն մինչև հիմայ էլ կարելի է գիշերները նկատել թէ ինչպէս այս ու այնտեղ առանձնացած ճրագներ մղւում են դէպի ներքև ջրի հոսանքից: Այդ լուսաւոր շերթը գետը գցած լէշի վրայ ամրացրած ճրագն է: Բարեկամները հեռուից հետևում են նրա ընթացքին, մինչև նա կանգ է առնում մի որևէ երես տեղի վրայ, կամ ջրի հոսանքից շուռ գալով անհետանում է:

Փարսերը, որոնց թիւը Պարսկաստանում հինգ հազարից չի անցնում, իսկ բոմբէյում և Հնդկաստանի արևելեան ծովափի մի քանի նսւահանգստերում 80,000 ի է հասնում, բացի հոգևորականներից, միւսները մոռացել են զենդական լեզուն և մեծ փոփոխութիւնների ենթարկել Զօրօստորի կրօնը, թէև իբրև կրակապաշտներ խոյս են տալիս սուրբ կրակը իրանց բերանի անմաքուր օգուով հանգչնել, դեռ պահպանել են իրանց դաքման (Dakma)՝ լուռ ամրոցը, որտեղ նրանք լէշերը դուրս են գնում ի վայելումն գիշատիչ թռչունների, որովհետև պէտք է անմաքուր մարմինը ոչ երկրի, ոչ ջրի, մանաւանդ ոչ էլ կրակի դպցնել:

Սանտալները՝ (Santal) հիւսիսային Հնդկաստանում ապրող մի կիսավայրենի, թափառական ժողովուրդ, Գանգէսի ջուրն են նետում մեռածի գանգոսկռի երեք կտորը, որպէս զի սրանք միանան իրանց նախնիքների աճիւնի հետ, ապա այրում են մնացած մարմինը: Նրանք կաշկանդուած են միանգամայն շամանականութեամբ ¹⁾: Ամեն ընտանիք ունի իր օճախի պաշտպան հոգին, որի անունը և այն աղօթքը, որով նրան է դիմում տան հայրը, որ միւսնոյն ժամանակ իւրայինների քահանան է, մինչև մահի մերձեանալը ծածուկ է պահում և յայտնում է միայն իր անդրանիկ որդուն՝ իր տեղապահին, և ինքը մեռնելով աստուածների շարքն է դասուում:

Հարաւային Հնդկաստանի մի ուրիշ փոքրիկ ցեղ, Տոդա (Toda) մեռածի առաջն է քշում նորա բոլոր կովերը և նրանցից երկուսը նրան զոհում, որպէս զի միւս աշխարհում նրանցով ուրախանայ:

1) (Ծանօթութիւն թարգ. Շամանիսմուս առաջ է եկել Շաման, այդ դաւանութեան պատկանող քրմերի անունից և համարւում է զարգացման ամենանախնական աստիճանին մէջ եղող կրօններից մէկը, տարածուած լինելով բնութեան ծոցում, ստոր աստիճանի քաղաքակրթութեամբ ապրող ժողովուրդների մէջ: Շամանները միւսնոյն ժամանակ կախարդներ են և ժողովրդին հաւատացնում են, որ բնութեան իշխանութիւնը իրանց ձեռին է:)

Անդամանեայում, Հնդկական արևելեան ծովափերին սովորութիւն կայ մեռելի երեսը գոյներով ներկել, ինչպէս սովոր են անել Աւստրալիայի մի քանի ցեղեր, դա սիմբոլիքական նշանակոթիւն ունի: Այրին կրումէ իր մարդի գազաթի ոսկրները մինչև կուրծքը հասնող մի թուկից քաշ արած և նրանց մէջ պահպանում է իր ամենաթանկագին իրերը: Անդամանի և Սումատրայի մէջ եղող Նիկորար կղզիների վրայ սովորութիւն կայ, որ աղջիկն է իր համար նշանած ընտրում և նրան իր հօր տունն է ուղարկում, եթէ նրանից դժգոհ է: Իսկ եթէ նա (մարդը) մեռաւ, աղջիկը պարտաւոր է ի նշան սգոյ իր ցուցամատի առաջի խաղը կտրել, որից կարելի է ազատուել վրանի սիւնը թրաշելով:

Տիրեթում, աշխարհիս ամենաբարձր բարձրաւանդակի վրայ և բուդայականութեան ամենագլխաւոր կենտրոնատեղում, մէկը մեռնումէ թէ չէ, խսկոյն քանդումեն նրա գլխի մազերը, որպէս զի հոգուն մարմնուց անջատուելը հեշտացնեն: Ամբողջ օրեր, հարուստները մինչև անգամ ամբողջ շաբաթների մեռածի լէշը տանն են պահպանում: Յետոյ կանչում են լամաներին (հոգեւորականներին), այն է անհասանելիներին, որոնք վճռում են՝ թէ ինչպէս պիտի թաղել ննջեցեալը, արդեօք պէտքէ նրան ջուրը գցել, երկրում թաղել, խարոյկի վրայ այրել, թէ վայրի կենդանիներին կերակրելու համար արտաքս գցել: Աղքատների մարմինների գործը հեշտ է գլուխ գալիս, զից մի քար կապելով լէշը սրնթաց առուի մէջ են գցում: Հարուստների մարմինները կամ այրում են կամ ծառից կապում, որպէս զի ազաւանները և ուրուրները նրանց գիշատեն: Կամ թէ տանում են դնում բարձր ժայռերի ծերպերի վրայ, ուր գիշատիչ թռչունները, անվախ մարդկանց շուրջը վխտելով, իրանց կերակրին են սպասում: Նրանցից ամենալստահը լէշը իր մագիկների տակ առնելով, կտուցով հանում է նրա աչքերը և յետոյ միտն է ծղատում, մինչդեռ միւսները ամեն կողմից ագահութեամբ նրան օգնութեան են գալիս: Շատ շուտով մարմնից միայն ոսկորներն են մնում, որ լաման հաւաքելով արագահոս առուն է գցում: Մեծաւորների և իշխանների մարմինները, որպէս զի շուտով վերադառնան գէպի իրանց

սկզբնական տարրը, լաման փոքր կտորների է կտրատում, որը ոսկորներն էլ ջարթոտում և այսպէս պատրաստած լէշը կարճ ժամանակում կլանում են շները ու գիշատիչ թռչունները: Ինչպէս ասում են արևելեան Տիբետում համարեայ անհետացել է լէշը կենդանիներին առաջը գցելու սովորութիւնը, իսկ երկրի միւս կողմերում գեռ մնում է անփոփոխ: Բացառութիւն կազմում են միայն լամաները: Տիբեթի բոլոր կողմերում նրանց թաղում են, այն էլ նստած դրութեամբ: Կեանքայի Քամ նահանգում թաղման տեղը՝ որտեղ սովորաբար լէշերը կտրատում են «խելսուման հովիտ» անունն է ստացել: Մինչդեռ քահանաները միանուագ եղանակաւ շուտ շուտ ասում են զանազան աղօթքների, նրանց ծառաները կտրատում են մեռածի լէշը և ապա ոսկորները ջարթոտում: Ուրուրների թւերի թփթփոցը և նրանց մնի վրայ կռուելուց առաջացած աղտոլակները առաջնորդում են լամաների հոգեւոր արարողութիւններին: Շատ անգամ մատների խաղերի ոսկորները թել են անցկացնում և տէրողորմեայ շինում, նոյնպէս պատրաստում են ոտների և ձեռների ոսկորներից թմբուկներ, որոնք ծառայում են վանքերում լամաներին աղօթքի հրաւիրելու: Չնայած սրան, Տիբետում մեռածին մեծ յարգանքներ են տալիս: Ի յիշատակ նոցա տեղի են բռնենում աղմկալից տօներ միացած կերուխումի հետ, որին հրաւիրում են ամեն անցորդի: Երեկոնները լուսաւորում են տները, ի պատիւ ննջեցելոց սարերի գագաթներին հրդեհ են վառում և լուսաւորուած տաճարներում ծնծղաների և թմբուկների աղմկալի ձայներին խառնւում է քահանաների ողբական մեղեդիների միանուագ եղանակը:

Սիամումն էլ են աղքատների մարմինները շներին և գիշատիչ թռչուններին թողնում: Բանգկոկի կամ Վատ — Սակետի (Vat-saket) տաճարի մօտ գտնուող մեռելների գաշտում շնթռնած են լէշի մնից ուռած, զազրելի շներ, իսկ շրջակայ ծառերի վրայ թւերը կիսատարած նստած կոչում են գիշատիչ թռչուններ և աչքերը ցցած նայում են գերեզմանոցում սփռւած մարդկային դժգոյն ոսկորների վրայ: Մարմինը երբէք տան դռնից չեն դուրս բերում, այլ դորա համար սլափից առանձին անցք է բացած, որ-

տեղից հանելով, շուտով պատեցնում են տան շուրջը և տանում հանգստարան, որպէս զի հոգին տան դուռը մոռանալով, յետ չը մնայ և այնտեղ չարութիւն անի: Իշխանների և մեծամեծների մարմինը զմեւում են, թագաւորի փորը լքցնում են մինչև անգամ սնդիկով և ապա 12 ամիս տան մէջ պահելով այրում են նրան շրջապատուած սպիտակաղգեստ սգաւորներով, ականջ խլացնող երաժիշաներով և աղօթքներ մումաացող բոնցերով: Հարուստներն էլ են մեռածի մի ոտը կամ ձեռը կենդանիներին նուիրում, որպէս զի այդպիսով Բուդայի օրէնքը, այն է՝ կենդանիներին սիրել, կատարած լինին: Ամենաբարձր աստիճանաւորներին այրում են փայտերը արծաթաղօծած խարոյկի վերայ և պատահում է որ ոսկէղօծ բամբակ են այրում, սոցա մէջը լքցուած լինելով ճայթիչ նիւթով փամփուշտի պէս վեր է բարձրանում և այնտեղ ճարճատումներ արձակելով այրւում: Աճիւնից պահելու համար վերցնում են միայն մի փոքր մաս, մնացածը կամ ջրի մէջ են թափում, կամ փոքրիկ արծաթից շինած սափորներում ներփակում, կամ թէ կիրի հետ խառնելով տաճարների, պատերը ծեփում: Հանդէսի վերջում տեղի է ունենում ժողովրդին կերակրելու համար մեծ ժամահաց՝ քելէխ:

Հիւսիսային Ասիայում թափառական և որսկան մի քանի ցեղեր իրաւ է արտաքուստ ընդունել են քրիստոնէութիւնը, բայց, չնայած դրան, պահպանել են իրանց հեթանոսական սովորութիւնները: Սիրիւում Որի և Ենիսէի մօտ ապրող Սստեակները մեռածի հետ թաղում են նրա սահնակը, նիզակը, կարթը, կացինը, օճախի քարը և փայտ, երբեմն նաև ծխախոտ և օղի: Միւսոյն ժամանակ ներկայացնում են մեռածին տիկնի կերպարանքով, իբրև պատկերացումն մահի, որին սեղանի վրան նստացնում են, երեկոյեան շորերը հանում, անկողնում պառկեցնում են և առաւօտեան նորից շորեր հագցնում: Երեք տարի անցնելուց յետոյ, երբ մարմինը բոլորովին փթում է և մահը արդէն անդառնալի է, այն ժամանակ տիկինը թաղում են ոսկորների մօտ և գերեզմանը զարդարում եղջիւրի եղջիւրներով, կուռքերի պատկերներով և լաթերով: Ամուրի միայ Գիլեակները կարծում են, որ մեռած տանտիրոջ հոգին իր սիրած շան մէջ է մտնում, դրա համար չաղացնում են նրան և ապա

տիրոջ գերեզմանի վերայ զոհում: Ափրիկայի կտրեակները այրում են մեռելի մարմինը, որպէս զի ինչպէս ասում են, հոգին կարողանայ անհետանալ: Չուքչենները կամ այրում են, կամ տախտակների վերայ են դնում իբրև ագռաւներին կերակուր:

Մոնղոլիայում թաղում են իշխաններին և իշխանուհիներին ըստ չինական սովորութեան դագաղներում դրած, բայց յայտնի օրերում հանգուցեալի շիրիմի վրայ կրակի զոհ են մատուցանում: Բարձրաստիճան լամաների մարմինները արժանանում են այրուելու պատւին, որից յետոյ ածիւնը տեղն ու տեղը քարերով և հողով շրջապատելով բլուր են կազմում: Բայց պատահում է, որ լամաների մարմիններն էլ են դաշտ տանում աղքատների մարմինների նման և թողնում շներին և թռչուններին ուտելու: Մարդու մի սովորած շները հոտոտում են խեղճ, ծեր մարդկանց, որ մի կապերտի կտորի վրայ իրանց վրանների առաջ նստած են լինում, իբր թէ անկարող են սպասել նրանց վախճանին և միւսնոյն ժամանակ կարծես հասկացնում են, թէ ինչ է սպասում նրանց: Շները ընկերակցում են դաշտը տանող մեռածների մարմինը տանողներին, միւս կողմից օգից լսում է ագռաւների կոռցը, որոնց Չինացիք մոնղոլների գերեզմանաթռչուն են կոչում: Եւ իրաւ սրանք երբէք չեն հեռանում Մոնղոլիայի բարձրութիւններից, որովհետեւ մարմինների մնացորդները բաւականանում են նրանց կերակրելու: Մոնղոլների ցեղակից կալմուկներն էլ չեն թաղում մեռելները, այլ իջւանից քիչ հեռու տանելով, աւազի մէջ վայր են գցում: Շատ յաճախ է պատահում, որ շներից մէկը, միւսներից մեռածի լէշը խլելով, գէպի իր տիրոջ վրանն է քաշ տալիս և այնտեղ բարեկամների առաջ մարբաղարդում: Դրա հակառակ կալմուկների հարեւան կիրգիզները պատուով թաղում են իրանց մեռելները, հոգ են տանում, որ վայրի գազանները դուրս չհանեն և թաղման տեղը մի բարձր ձուղ ցցելով ծայրին ձիան գլուխ անցրած նշանացի են անում: Խիստ օտարօտի է Մանժուրայում ապրող Սոլոնգների (solond) թաղման սովորութիւնը: Նրանք միշտ այրում են մարմինը և ածիւնը պարկի մէջ ածած քաշ են անում ծառերից:

Ոչ մի տեղ այնպէս մեծարամբով չեն յիշում մեռելին, ինչպէս

Չինաստանում, ուր տարածուած են միաժամանակ կոնփուցի բարոյական կրօնքը, Վաստի նախնիքների և հոգիների հաւատը և Բուդդայի սրբերի հաւատը: Նախնիքների հոգիների պաշտամունքը այստեղ միշտ պատկանել է ամենագլխաւոր պարտաւորութիւնների կարգին: Մեռածներին կանգնեցնում են յիշողութեան տախտակներ և նրանց շիրիմներին զոհեր են մատուցանում: Թէ որ տան հայրը մեռաւ, մեծ որդու պարտաւորութիւնն է յիշողութեան տախտակի վրայ յիշատակել նրա ամեն մի առաքինութիւնը և զոհել նրան խունկ, ծաղիկներ և ուտելիք: Գերեզմանի վերայ այրում են նմանապէս ձիեր, ծառաներ, շորեր՝ բայց թղթի մէջ փաթթած: Կար ժամանակ, երբ կայսրի հետ հարիւրաւոր սորուկներ էին թաղւում, որ մեռածին տալիս էին, ինչ որ նրան միւս աշխարհում հարկաւոր է: Ամեն տարի մայիս ամսում բոլոր ժողովուրդը գնում է գերեզմանատուն: Ապիտոզգեստ, որ երկրի սգազգեստն է համարւում, ամեն մէկը իւր ազգականների հանգստարանն է գնում, որ շիրիմների վրայ ծաղիկներ ցրուեն, պտուղներ դնեն և զանազան իրեր զոհեն: Գերեզմանը շուաքող ծառերից ներքեւ են թռչում թռչնիկները և վայելում բերած բարիքները: Ով որ նախնիքներին պարտական պատիւները չէ տալիս, նա պէտքէ նրանց հոգիների վրէժից երկընչի, որոնք մահուան ներկայանալուց յետո՛ւ մարմիններից անջատուելով օդն են թռչել: Չար հոգիները ընտրում են սրածայր ժայռերը իրանց բնակութեան տեղ, իսկ բարիները աստիճանաբար, մեղմ լանջերով բարձրացող բլուրները: Նրբ հոգիները սաւառնում են երկրիս երեսին, նոքա աւելի ախորժանքով ընտրում են գետերի ծովն ու մոռն ընթացքը, խոյս տալով ուղիղ ճանապարհներից և այդ է պատճառը, որ Չինացիները չեն սիրում երկաթ ուղիները:

Չինաստանում դագաղների վաճառումը՝ պատկանում է ամենածաղկեալ վաճառականական ճիւղերից մէկին: Նոյն իսկ ուսումնարանում դրած է մի դագաղ, որ երեխաները շարունակ աչքի առաջ ունենալով միշտ յիշողութեան մէջ պահեն նախնիքների մեծարանքը: Շատ տներում պատրաստի դրած է միջից կտրած

Ծառաբունի կերպարանքով մի դագաղ սակայն մի քանի նահանգ-ներ անտառները ոչնչացնելով ստիպուած են այժմ հարկաւոր փայտը Ամերիկայից բերել: Եթէ հայրը մեռաւ և տանը պատրաստ դագաղ չկայ, մեծ որդին պարտաւոր է հոգ տանել և հօր համար դագաղ պատրաստել և պատահել են այնպիսի դէպքեր, երբ՝ որդիք իրանց ստրկի տեղ ծախել են, որպէս զի հօր համար փառաւոր դագաղ պատրաստեն: Չինաստանում կան բացի իսկական հանգստարաններից և գերեզմանի—ճեմելիքներից մեռելների ժամանակաւոր հանգստարաններ: Այդ սովորաբար բարձրութիւններում եղող գիւղերն են, որոնք լցուած են աճիւններիփող ստիպմամբ և դագաղներով, որոնց արտաքին մասը սիրուն կերպով դարգարուած է ծաղիկներով, պտուղներով, թռչուններով, երաժշտական գործիքներով և ըստ հին սովորութեան պէտքէ մեռածը իր հայրենի հողում թաղուի, դրա համար պարտաւոր են մեռածի զաւակները, կամ բարեկամները հայրենիքից հեռու մեռնողին հայրենիք բերել: Բայց որովհետեւ շատ դէպքերում հեռուից բերելը շատ թանգ է նստում, ուստի առժամանակ մեռնողին յիշեալ գիւղումն են դնում, մինչև որ բաւականի թւով մարմիններ կհաւաքուեն, որ միասին բերելով, շատ թանգ չի նստում: Այն հաղարաւոր բանւորները և վաճառականները, որոնք գաղթում են աշխարհիս երեսին ամենախիտ և ամենաբազմամարդ, այն է չորս հարիւր միլիոն ժողովուրդ ունեցող տէրութիւնից դէպի մալայական Արխիպէլագը, դէպի Աւստրալեան և Ամերիկան, իրար մէջ ընկերական կապեր ունին, նորա նաւեր են վարձում և օտարութիւնում մեռնող հայրենակիցներին հայրենիք տանում:

Ազոյ ժամանակը տեւում է երեք տարի, մանդարինների, պաշտօնեաների և օֆիցերների համար 27 ամիս: Չինացին այդ ժամանակամիջոցում պէտքէ ոչ միս ուտի ոչ գինի խմի, հրապարակական պաշտօններից պէտքէ հեռու մնայ և չմասնակցի ոչ հաճոյական հանգէսների և ոչ ժողովրդական ուրախութիւնների: Այս եղել են որդիք, որ այդ բոլոր ժամանակի ընթացքում իրանց հօր մարմինը առանց թաղելու տանն են պահել, ցերեկը

Նրա մօտ լուռ ու մունջ նստելի գիշերը Հասարակ տախտակների վրայ նրա մօտ ննջելի էր կայսրը մեռնում է, պարտական են բարձր պաշտօնեաները մի ամբողջ տարի Հասարակ ժողովուրդը Հարիւր օր տեղական սգազգեստ, սպիտակ շորեր կրել, Այդ ժամանակ չպէտքէ տեղի ունենայ ոչ Հարսանիք, ոչ տօներ տօնուի, բոլոր ժողովուրդը պէտքէ միրուքը և մազերը չկտրի, և սափրիչները իրանց ապրուստը աէրութիւնից են ստանում: Ապօրինի զաւակների և օրավարձ մշակների թաղման ժամանակ տեղի չէ ունենում և ոչ մի հանգէս: Նրանց կամ գերեզմանատուն են տանում առանց այլևայլութեան, կամ ուղղակի ջուրն են գցում: Աղքատի որդուն դնում են հէնց դռան առաջ և գերազմնափորը գալով, վերցնում տանում է: Քանի մի ճանապարհորդներ այդ սովորութեան իսկական պատճառին անտեղեակ լինելով կարծել են, որ գրանք տպանած երեխաներ են, մինչդեռ յայտնի է, որ չինական օրէնքը երեխայատպանութեան դէմ է: Չնայած դրան, Ամոյի (Amoi) կողմերում, ուր բնակութեան խտութիւնը չափից անցել է, ընդհանրապէս տարածուած է աղջիկ զաւակներին մօրթելը: Փոքրերին ջրի աւազանում խեղդում են և ապա գերեզմանափորին են տալիս:

Պենկինի շրջակայքը լիքն են գերեզմանաքարերով և զոհի տաճարներով, որոնց պատերը ծածկուած է ի յիշատակ մեռելների կանգնեցրած արձանաքարերով: Նրանք առհասարակ պատկանում են միայն մի ընտանիքի և շրջապատուած են զանազան սաղարթախիտ ծառերով: Մարմարեայ և որձաքարեայ շիրիմները ներկայացնում են սովորաբար մի հսկայական կրիայ, որի մէջքի վրայ քանդակուած է արձանագրութիւնը: Կայսերական հանգրստարանը շրջապատուած է բրնձեայ և մարմարեայ առիւծի և այլ կենդանիների արձաններով զարդարուած ճեմելիքներով, որոնք ըստ մեծի մասին մարգուս վրայ օտարօտի տպաւորութիւն են անում: Մինգ հարստութեան (թագաւորական ցեղի) գերեզմանատուներ գտնւումէ մայրաքաղաքից մօտ քառասուն քիլոմետր հեռու: Տիեն-Շու լեռներից ներփակեալ մի հովտում, այդ գերեզմանատուներ կարելի է հասնել անցնելով հրաշալի մար-

մարեայ դարբասով ամրացրած մի կիրճով: Ամենայայտնին Խնգլէ (Jungle) կայսեր շիրիմն է: Դէպի այդ շիրիմը տանող ճեմելիքները զարդարուած են մարմարեայ արձաններով, այն է՝ տասներկու մանգարիներ, քաջանաներ և զինւորներ և տասներկու զոյգ կենդանիներ՝ առիւծներ, փղեր, ուղտեր, ձիեր, շներ և առասպելական միեղջերուներ մի քանիսը ծնկաչոք դուրսեամբ, միւսները կանգուն: Նիրմի առաջ շինուած է զոհի տաճարը, մարմինը հանգստանում է մի սրահի վերջի ծայրում, մի լեռան ներքեւում: Պեկինի հարաւարեւելեան մասում գտնւում է մի ծառաստանում Ծինգ (Tsing) հարստութեան գերեզմանատունը, բայց մինչև օրս էլ թոյլ չեն տուել միօրեւէ Եւրոպացու այնտեղ ոտք կոխել:

Կին (Kin) հարստութեան գերեզմանատունը արդէն աւերման է մատնւում: Նաև Նանկինում, կայսերութեան առաջի մայրաքաղաքում կարելի է տեսնել հին կայսերական գերեզմանատների մնացորդները զարդարուած նոյնպիսի հսկայական կենդանիների պատկերներով, ինչպէս Պեկինում:

Կորէեա թագաւորութիւնումն էլ, ինչպէս Չինաստանում, մեռածների որդիքը պէտքէ երեք տարի սուգ պահեն, հասարակական կեանքից և գործունէութիւնից պէտքէ հեռանան և բացի այդ՝ տիրում է այդտեղ մի չինական սովորութիւն, որ Չինաստանից արդէն անհետացել է, այն է մի բան հարցնողին պատասխան չեն տալիս, օրեկան երեք անգամ ախ են քաշում, ճանապարհին պէտքէ երեսները ծածկեն կամ լայն գլխարկով, կամ երկար քողով կամ հովհարով:

Ընդհանուր հայեացք գցելով արեւելեան ժողովուրդների թաղման սովորութիւնների վրայ, հեշտութեամբ կնկատենք, որ նրաք սկիզբ են առել արեւելցու կրօնական շրջահայեցողութիւնից և որ երեւակայութիւնը, արեւելեան ազգերի այդ ամենաաչքի ընկնող բնորոշ յատկութիւնը ի մասնաւորի պատճառ է եղել այն օտարոտի սովորութիւնների առաջ գալուն և որ նա իշխելով արեւելցու ընդհանուր հոգեկան կեանքի վրայ շրջապատել է նաև մահը, որից առաջանում է վերջաւորութիւն պատճառող

խորին վիշտը, զարհուրանքի և սարսափի անսիւփի պատկերնե-
րով, բայց միւս կողմից, բարձրացրել՝ վեհացրել է գերեզմանը
յուսոյ և կեանքի հրաշալիքներով:

Ֆ.

1892 թ. 16-ն Փետր.

Վ. Ի. Եննա: